№ 33 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 21 — 1889 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 21 № 33

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ազգ օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ВЪ НАСТОЯЩЕМЪ 1889 ГОДУ

АРМЯНСКАЯ ГАЗЕТА

XVII ГОДЪ. **„МШАКЪ“** ГОДЪ XVII.

издается въ прежнемъ форматѣ и по прежней программѣ.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ—10 р., на полгода—6 р., помѣсячно—по 1 рублю.

Иногородніе адресуются: въ Тифлисъ, въ редакцію газеты «Мшакъ».

Для заграничныхъ подписчиковъ: Tiflis, rèdaction du journal arménien «Mschak.»

Газета «Мшакъ» печатаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ. Плата по 2 коп. со слова. Съ объявленій, печатаемыхъ болѣе десяти разъ, дѣлается уступка. На первой страницѣ никакія постороннія объявленія, кромѣ траурныхъ, не печатаются. За траурныя объявленія взимается: на 1-й стр.—4 рубля, на послѣдней-же—2 рубля.

Редакторъ-издатель Григорій Арцруни.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասի ցուցահանդիսի առիթով. Նամակ Գանձակից. Նամակ Կարսից. Նամակ Ախալցխայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկու գիւտ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նախկին ուսանողի յիշողութիւններից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍԻ ԱՌԻԹՈՎ

—

Կովկասի զանազան կողմերից եկած տեղեկութիւններից երևում է, որ գաւառներում փոքր առ փոքր պատրաստութիւններ են տեսնվում առաջիկայ գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդիսին մասնակցելու համար, որը պէտք է կայանայ Թիֆլիսում, սեպտեմբեր ամսին։

Այդ տեղեկութիւնների հետ միասին, մեզ լուրեր են հասնում և այն մասին, որ շատ տեղերում ոչ թէ միայն ազգաբնակութիւնը չը գիտէ ցուցահանդիսին մասնակցելու կերպը, միջոցները, զանազան նիւթեր ուղարկելու ճանապարհը, այլ անտեղեակ լինելով այդ բոլորին, մինչև այժմ մի առանձին սէր և մի առանձին եռանդ չէ ցոյց տալիս ցուցահանդիսին մասնակցելու գործում։

Դա, ի հարկէ, ցանկալի չէ։ Ցանկալի չէ թէ ցուցահանդիսի աջողութեան տեսակէտից, և թէ ժողովրդի գիւղատնտեսական շահերի տեսակէտից, շահեր, որոնք նախատեսնվում են Կովկասեան ապագայ ցուցահանդիսի աջող լինելուց։ Հէնց այդ պատճառով հարկաւոր է վաղօրօք ուշադրութիւն դարձնել այդ բանի վրա, և առանց ուշացնելու միջոց տալ ազգաբնակութեանը որքան կարելի է հեշտութեամբ և առանց կասկածելու մասնակցելու ցուցահանդիսին։

Մենք չը գիտենք, թէ արդեօք գաւառներում կազմված են և կազմվում են այն մասնաժողովները, որոնք պէտք է հեշտացնեն ցուցահանդիսին մասնակցելու գործը, և պէտք է աջակցեն ազգաբնակութեանը յարաբերութիւններ սկսելու Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հետ։ Մենք այդ մասին մանրամասն տեղեկութիւններ չունենք, բայց ձեռքի տակ եղած տեղեկութիւններից էլ երևում է, որ այդ մասնաժողովների կազմակերպութեան և գործունէութեան վերաբերմամբ դեռ մի չոչափելի քայլ չէ եղել։

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը, անկասկած, մեծ սխալ գործած կը լինի, եթէ բաւականանայ մինչև այժմ ձեռք առած միջոցներով և եղած պաշտօնական կարգադրութիւններով. հարկաւոր է անդադար առանձին ուշադրութեամբ հոգալ, որ ժողովուրդը նախ հաւատով վերաբերվի դէպի ցուցահանդէսը և ապա միջոցներ ունենայ նիւթեր ուղարկելու ցուցահանդիսի համար։ Այդ պարտաւորութիւնը ամենից առաջ Գիւղատնտեսական ընկերութեան վրա է ընկնում, և նրա գործն է, ոչ թէ միայն գաւառական տեղական իշխանութիւնների, այլ և տեղական երիտասարդութեան, և վարժապետների միջոցով արծարծել ազգաբնակութեան մէջ այդ խնդիրը, տպագրել և տարածել ժողովրդի մէջ, տեղական լեզուներով, բրոշիւրներ և ուրիշ այդպիսի կողմնակի միջոցներով հող պատրաստել ցուցահանդիսի աջողութեան համար։

Առանց այդ տեսակ միջոցների ցուցահանդիսի աջողութիւնը ցանկալի աստիճանին չէ կարող հասնել, և որ ամենագլխաւորն է ժողովրդի ահագին մեծամասնութիւնը հեռու կը մնայ Կովկասի առաջին գիւղատնտեսական-արդիւնաբերական ցուցահանդիսին մասնակցելու գործից։

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Մարտի 12-ին

Տեղիս յաջորդի կարգադրութեան համաձայն՝ այսօր տեղի պիտի ունենար Ս. Յովհաննէս եկեղեցու երկսեռ դպրոցների հոգաբարձուների ընտրութիւնը. հոգաբարձական ընտրութեան պիտի մասնակցէին միմիայն Ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները. գոնէ այդպէս էր յայտարարված.... Հոգաբարձական ընտրութիւնը չը կայացաւ. թեմիս առաջնորդը հեռագրով հրամանագրել է առժամանակ յետաձգել ընտրութիւնը։ Ընտրութիւնը յետաձգելու շարժառիթն է Ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխականների անհամաձայնութիւնը. սրանք սաստիկ վիրաւորված են, անիրաւացի են համարում այն կարգադրութիւնը, որը զրկում է իրանց Ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցների հոգաբարձական ընտրութեան մասնակցելուց, այս պատճառով թէ հեռագիր և թէ բողոքագիր են ուղարկում սրբազան առաջնորդին, խնդրելով շուտափոյթ անօրինութիւն։

Մինչև այսօր հոգաբարձական ընտրութիւնը կայացել է երկու եկեղեցու ծխականների մասնակցութեամբ, ընտրվել են հոգաբարձուներ երկու կողմի ծխականներից ևս. խտրութիւն չէ եղել երկու եկեղեցիների ծխականների մէջ, որովհետև ունեցել են մի ծխական դպրոց՝ տղայոց և օրիորդաց։ Այդ դպրոցները թէև անուանվում են Ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցներ, սակայն շարունակ օժանդակվել են ուրիշ եկեղեցիներից ևս,—բայց այժմ, որովհետև Լուսաւորիչ եկեղեցու ծխականները համախօսականով վճռել են ունենալ թաղական երկսեռ դպրոցներ, և մինչև անգամ արդէն դիմել են թոյլտուութիւն ձեռք բերելու, որպէս զի ուսումնարանի շինութիւնը շուտով սկսեն, այս հիման վրա հոգեոր վարչութիւնը բարւոք է համարել ծխականներին միմեանցից անջատելու, թէ հոգաբարձական ընտրութեամբ, թէ հոգաբարձուներով և թէ դպրոցների վերաբերեալ այլ և այլ հոգացողութիւններով։

Այս կարգադրութեան համամիտ է Ս. Յովհաննէս եկեղեցու ծխականների համարեա մեծամասնութիւնը. սրանք այս անջատումով վերջ տուած են տեսնում այն խռովութիւններին ու տարաձայնութիւններին, որոնք շարունակ տեղի են ունեցել երկու ծխականների մէջ դպրոցական հաշիւների կամ օրիորդաց դպրոցի համար շինութիւն վարձելու ժամանակ։

Օրիորդաց դպրոցը սեփական շինութիւն չունի. [illegible] խտրութիւն են անում, որովհետև ամենաանհրաժեշտ յարմարութիւններով անգամ շինութիւն չեն կարողանում ձեռք բերել. հէնց այս տեղափոխութեան ժամանակ խռովութիւններ են ծագում։ Ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները կամենում են, որ դպրոցի շինութիւնն իրանց մասումը լինի, մօտ լինի իրանց, միւս ծխականները՝ ընդհակառակն, աշխատում են, որ իրանց մասումը լինի։ Այս ձգձգելու շնորհով էլ մինչև

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԿԻՆ ՈՒՍԱՆՈՂԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

—

Ուսում առնող երիտասարդութիւնը առհասարակ մի տեսակ անբաւականութիւն է առաջացնում հայ հասարակութեան մէջ։—Նա չէ կատարում իր սրբազան պարտականութիւնները, նա թուլանում է դեռ կեանք չը մտած, եռանդից զուրկ՝ փախչում է հասարակական գործունէութիւնից և այլ այս տեսակ մեղադրանքներ կը լսէք և լրագրութեան և հասարակութեան մէջ։

Ես թոյլ կը տամ ինձ, որպէս Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող, հաղորդել այն տպաւորութիւնները, որ դուրս բերեցի ուսանողական կեանքից, նկարագրել նոյն քաղաքի հայ հասարակութեան և ուսանողութեան յարաբերութիւնները, որոնք, իմ կարծիքով, նկատված անախորժ երևոյթների նախաշաւիղ են, ապա ուրեմն կը պարզաբանեն այն դերը, որ վիճակված է մեր երիտասարդութեանը խաղաղ հասարակական կեանքի ասպարիզում։

—

Ուսանողական կեանքը, այն թարմ և եռացող աշխարհը, ուր ամեն ինչ կենդանութիւն է ստանում, ուր ամեն ինչ շփոթվում է, լաւը վատի հետ, վատը միջակի հետ, շատ յիշողութիւններ է ծնեցնում իմ մէջ։

Այո, զուարթ են դեռ այն զգացմունքները, որ պաշարել էին ինձ, երբ ես աւարտեցի գիմնազիան։ Անսահման ուրախ, գտնվելով ամենաբաղդաւոր տրամադրութեան մէջ, ես չէի կարող մը-տածել, թէ ինչ աշխարհ է սպասում ինձ, ինչ մարդիկ կան այնտեղ և ինչ կեանք են վարում նրանք։ Ես միայն մի բան գիտէի, որ այսուհետև ուսանող անունը պիտի կրեմ, որ կեանքս պիտի ընթանայ ազատ և աւելի անկախօրէն։ Լի յոյսերով և եռանդով, ուրախութիւնից թեր ստացած՝ համարձակ սլացայ դէպի ինձ համար նոր ուսանողական կեանքը։

Ես դարձայ ուսանող։ Կեանքս նոր ընթացք ստացաւ, պարապմունքներս շատացան. ես, որպէս մի փոքրիկ կաթիլ անյայտացայ ընդհանուր հոսանքի մէջ։ Երևան եկան նոր դաղափարներ, նոր պահանջներ և նպատակներ։ Alma-mater-ից դուրս՝ մեր ընկերական շրջանը մի մեծ քաղցրութիւն էր մեզ համար, ուր մենք աշխատում էինք լրացնել այն, ինչ որ պակաս էր։

Մոսկվայում ամեն մի բարձրագոյն դպրոց ունէր իր աշխարհը, իր իդէալները և դաղափարները. կար, ի հարկէ, և ընդհանուր կապ, ընդհանուր ուղղութիւն, բայց նրանք, ըստ մեծի մասին, վերաբերվում էին ընդհանուր հարցերին։ Ասելս այն է, իւրաքանչիւրը նրանցից մի ամբողջութիւն էր կազմում շատ տարբեր բնաւորութեամբ. մէկը կունենար այնպիսի յատկութիւն, որը միւսի մէջ բոլորովին չէր նշմարվում, այլ միայն սեփական էր իրան։

Տեխնիկները ծանր բնաւորութեան տէր մարդիկ էին. նրանք, որպէս ապագայ ճարտարագործներ և զանազան գործարանների վերատեսուչներ միշտ զբաղված էին «նախագծերով»։ Նախագիծ պատրաստելու ձգտումը երևում էր յաճախ և «պետրովցիների» մէջ, մանաւանդ այն ժամանակ, երբ պահանջ էր զգացվում պարապել մասնագիտութիւնից դուրս՝ կողմնակի գործերով։ Ամենանեղ և հեշտ իրագործելի նպատակը անիրագործելի էր դառնում նրանց համար։ Պրօէկտ պատրաստելը, փոքր նպատակը լայնացնելու ձգտումը, մի մտքից արագութեամբ դէպի միւսը անցնելը՝ միշտ անհետանք էին թողնում ձեռնարկելի գործը։ Նրանք կորցնում էին յենակէտը և առաջնորդող միտքը, որպէս մի անգոյն կաթիլ, որը ոչնչանում էր ընդհանուր, բաղմակողմանի և մութ ցանկութիւնների մէջ։

Համալսարանականները աչքի ընկնող առանձնայատկութիւն չունէին. նրանք աւելի չափաւոր էին իրանց ձգտումների մէջ, գուցէ և աւելի անգոյն։ Սրանց և միւս բարձրագոյն դպրոցների ուսանողների մէջ կար մի տեսակ դաղտնի անբաւականութիւն միմեանց դէմ, որ տեղի էր տալիս անախորժ երևոյթների և յարձակումների միմեանց վրա, կարծես միշտ նկատվում էր նրանց մէջ մտքերի անհաչտութիւն։

Ծանօթանալը և ընտելանալը ընկերական շրջաններին դժուար չէր։ Բաւական էր ստեղծել մի դաղափար, յարուցանել մի գրականական կամ բարոյագիտական հարց, և երիտասարդ ուսանողները շրջապատում էին յարուցանողին կամ շատ խօսողին։

Այսպէս՝ այդ տեսակ ուսանողներից մէկը ըսկսեց քարոզել սէր դէպի գրականութիւն։ Բաղմահնչիւն քարոզը անհետանք չը մնաց։ Գտնվեցան համակրողներ, զգացմունքի և դաղափարների մէջ թեւեր թափահարողներ։ Ծնվեց գործը, հետևաբար ձուլվեցան և բարեացակամ մարդիկ. փող հաւաքեցին, գրքեր դնեցին, մատենադարան սարքեցին, ամեն ինչ ջերմութեամբ գործեցին.... սակայն շատ շուտով սառնութեան քողը պատեց դաղափարին։

Գրականասէր երիտասարդները իրանց բարի ձգտումներով հուշադրութեան էին արժանացել և գրաւել էին մեծամասնութիւն, սակայն երբ հասաւ գործունէութեան շրջանը, տաքացած երիտասարդները հանդստացան, հաստատամտութեան և անկեղծութեան աղբիւրը ցամաքեց, իսկ դաղափարը, առաջնորդող միտքը մնացել էր անտուն և անտէր հրապարակի վրա, որտեղ նա ոլոր-մոլոր թափառելով՝ ամիսը մի անգամ փորձ էր փորձում գրաւել անցորդների սէրը և համակրութիւնը, բայց նրա դոռում-դոչումից, յուսահատ ձայնից լսվում էր միայն խուլ արձագանք....

Գործը առաջին երկու տարին վատ դրութեան մէջ չէր։ Մասնակցողները հաւաքվում էին, կարդացվում էր մի բէֆերատ, որը՝ ենթարկվելով քննութեան, ազատում էր կարդացողին ուրիշ ամեն պարտականութիւններից. նա մի տարի կարող էր ոչինչ չանել, միայն յաճախել և լսել։ Լեզուն, հին և նոր գրականութիւնը, մանկավարժութիւնը, ժողովրդի ընթերցանութեան նպատաւոր հանգամանքները ուսումնասիրելու նպատակով՝ հաւաքվում էին բանասէրները։ Բաւական էր, որ մենք առիթ ունենայինք կարծելու, որ մի բան անում ենք։ Տարեկան մի բէֆերատով ձեռք էր բերվում բանասիրի մեծ կոչումը, և մենք բաւական էինք։

Իւրաքանչիւրը մեզանից մի տեսակ ցաւ էր զգում, երբ մի բան կարդալու հերթը իրան էր հասնում, կարծես, դա լինէր մի պատիժ. մէկը ասում էր—ես ժամանակ չունեմ, միւսը—ես արդէն կարդացել եմ, իսկ սա կամ նա դեռ ոչինչ չէ արել, և այլն։

օրս օրիորդաց դպրոցը սեփական շինութիւն չունի, թէև շինելու մտադրութիւն և նիւթական միջոց վաղուց է, որ կայ։

Ժողովրդի մի մասը ցանկանում է դպրոցի շինութիւնը սկսել Ս. Յովհաննէս եկեղեցու պարտիզում, որը, համարեա, կից է եկեղեցուն, միւս մասը, որը հեռու է բնակվում Ս. Յովհաննէս եկեղեցուց, պնդում է, որ քաղաքի կենտրոնում նոր հող առնվի ու այնտեղ կառուցանվի։

Լուսաւորիչ եկեղեցու ծխականները այս անջատումն այլ կերպ են ըմբռնում և այլ կերպ բացատրում։ Նրանք այն կարծիքի են, որ նոր բացվող թաղական երկսեռ դպրոցները համարվեն այժմեան դպրոցների մի մասը և կառավարվեն նոյն հոգաբարձութեամբ, նոյն վարչութեամբ, այսպիսով երկու ծխականներն էլ տէր կը լինեն երկու դպրոցներին էլ, և «մեր» ու «ձեր» բառերը ասպարէզ եկած չեն լինի,—հակառակ դէպքում՝ այսինքն այն ժամանակ, երբ իրականայ երկու ծխականներին բաժանելու մտադրութիւնը, երբ իւրաքանչիւր եկեղեցու ծխականներին որոշվի ունենալ առանձին հոգաբարձութիւն, առանձին վարչութիւն, այն ժամանակ պիտի բաժանել նաև այն դրամական աղբիւրները, որոնցով կառավարվել են մինչև այսօր Ս. Յովհաննէս եկեղեցու ծխական դպրոցները, որովհետև որոշեալ դրամական աղբիւրների մեծ մասը կտակվել են ընդհանրապէս Գանձակի հայոց դպրոցի անունով. կտակողը, նուիրողը աչքի առաջ չէ ունեցել բացառապէս Ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցները, այլ ընդհանրապէս «Գանձակի հայոց դպրոցը»։ Մինչև այժմ մէկ դպրոց է եղել, մէկն է վայելել, այժմ քանի որ երկրորդն էլ է բացվում, ուրեմն չը պէտք է զրկել դրան, այլ հարկաւոր է մաս հանել, այնպէս կարգադրել, որ այդ դպրոցն էլ կարողանայ իր գոյութիւնը պահպանել։

Խնդրի լուծումն դեռ անորոշութեան մէջ է, միայն այսքանն է ակներև, որ երկու ծխականների մէջ տարաձայնութիւն է տիրում. խումբ-խումբ խօսելը, բամբասելը ու միմեանց սպառնալիքներ կարդալը նկատելի են ամենայն քայլափոխում։

Այսպէս—մինչև դպրոցների պատուոյն ու բարեկամ են հանդիսացել, ամենքը իրանց անձնականը թողած՝ հասարակական ինդիրներով են զբաղված, դպրոցների շահերն են պաշտպանում.... բայց ովքեր,—նրանք, որոնք ոչ միայն չը գիտեն թէ դպրոցը քանի բաժանմունքից է բաղկացած, քանի աշակերտ, քանի աշակերտուհի ունի, ովքեր են ուսուցիչները, ինչ մարդիկ են, այլ նաև չը գիտեն թէ որտեղ է գտնվում դպրոցի շինութիւնը....

Եթէ իսկապէս հետաքրքրվէին ուսումնարաններին դրութեամբ, եթէ նրանք անկեղծօրէն ցանկանային դպրոցների առաջադիմութիւնը, եթէ տարվայ մէջ դէթ մի երկու անգամ բարեհաճէին ուշադրութեան առնել դպրոցների ներքին դրութիւնը, եթէ ունենային ծնողական այն ամենատարրական հետաքրքրութիւնը, թէ իրանց որդին ուր է գնում, որպիսի շինութեան մէջ է սովորում, ինչպիսի նստարանների վրա է նըստում, ինչպիսի անձնաւորութիւնների ղեկավարութեան է յանձնվում, այն ժամանակ դպրոցները այն դրութեան մէջ չէին լինի, ինչ դրութեան մէջ որ են այժմ.... Բայց այսօր այդ անտարբերութեան կատարելատիպ մարդիկ հետաքրքրվող են դարձել, դպրոցասէր են դարձել. հրապարակներում, անկիւններում խօսում, դատում, դատափետում են, յուզված են։

Ա. յուզված է և բոլորովին հակառակ է հոգևոր իշխանութեան կարգադրութեանը։ Ինչու, որովհետև Ս. համաձայն է այդ կարգադրութեան.... Բ. ինչու է բորբոքված, այսինքն նա, որի համար ոչ ուսումնարան կայ, ոչ խեղճութիւն և ոչ բարեգործութիւն։ Որովհետև Գ. նրա մօտ սպառնացել է թէ՝ տեսէք ձեր ծխականների գլուխին ինչ օյին ենք բերում....

Ինչու, դիցուք Մ. վրդովված է. միթէ իսկապէս նրա համար, որ անիրաւութիւն է գործվում, զրկանք տեղի ունենում—Ո՛չ, վրդովված է՝ որովհետև հոգաբարձական թեկնածութիւնից դուրս է մնում, նա համոզված էր, որ ինքը անպատճառ հոգաբարձու պիտի ընտրվեր, բայց այսօր թոյլ չեն տալիս անգամ ընտրութեանը մասնակցելու։

Եւ եթէ ուշադրութեամբ և անաչառ կերպով վերաբերվելու լինենք տեղի ունեցող դատողութիւններին ու արտայայտված ցանկութիւններին, անշուշտ կը նկատենք, որ բոլորի շարժառիթն է եսամոլութիւնը, և փոքրոգութիւնից բղխած բծախնդրութիւնները։ Եւ այդ մարդիկ անձնական հաշիւներով են զբաղված մի այնպիսի ժամանակ, երբ անհրաժեշտ է համերաշխութիւնն ու լուրջ դատողութիւնը գերազասել ամենայն բանից,—երբ հարկաւոր են բանիմաց հոգաբարձուներ, արժանաւոր և պարտաճանաչ մարդիկ, որոնք կարողանան ուսումնարանների դրութիւնն ամենակերպ բարւոքել, և նպաստել անագին քաղաքի երկու տարրական ուսումնարանների առաջադիմութեան գործին։

Գործ պէտք տեսնել, և ոչ թէ ինտրիգաների վրա հիմնված կուսակցութիւններ կազմել։

***

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մարտի 12-ին

Վերջին նամակովս հաղորդում էի քաղաքիս հեղեղման մասին։ Այն ժամանակ՝ երբ փոսային յանձնեցի այն նամակը, ջուրը իր բոլոր ոյժովը լցված էր փողոցներում և անանցնելի էր դարձրել վերջիններս։

Կարսին սպառնում էր վերջնական և անխուսափելի աւերը։ Եւ արդարև, բոլոր պայմանները նպաստում էին քաղաքի կործանմանը՝—բազմաքանակ ձիւն, հարաւային ջերմ քամի, երկարատև յորդահոս անձրև։ Ամսիս 6-ից—7-ը լուսանալու գիշերը՝ հեղեղը արդէն ամեհի կերպով ողողել էր քաղաքի մի մասը. անձրևը վերեից թափվում էր, ամբողջ բնութիւնը ջուր էր ներկայացնում և աւելի սարսափեցնում առանց այն էլ սարսափահար կարսեցուն։ Վազվզոց, աղաղակ, բացականչութիւններ՝ չէին դադարում ամբողջ գիշերը. բնութեան ահարկու տեսիլը խլել էր կարսեցու աչքերից քունը։ Ոչ ոք չէր կասկածում, որ եթէ օդը նոյն անփոփոխ դրութեամբ շարունակվէր՝ ջուրը հասնելու էր աներևակայելի բարձրութեան և իր կատաղի ընթացքով կործանելու էր բոլոր շինութիւնները։ Սակայն բնութիւնը խըղճաց խեղճ ժողովրդի վրա. ամսիս 7-ին առաւօտեանից սկսած փչեց հիւսիսային ցուրտ քամին, գետնի մակերևոյթը սկսեց սառչել և երեկոյեան պահուն թէ Ցառ-Բօղազի և թէ Կարս-չայի ջուրը սկսեց պակասել։ Հետևեալ օրը, ամսիս 8-ին, նոյն ձմեռնային ցուրտ եղանակին, ջուրը մասնաւորապէս հոսում էր չուկայի փողոցից, բայց այդ ևս դադարեց և ժողովուրդը սկսեց բանալ կըրպակները, թափել լճացած ջուրը և չորացնել թրջված ապրանքները։ Սակայն այժմ էլ կըրպակների ամենամեծ մասը դատարկ է, շատերը դեռ չեն դարսել ապրանքները և չուկան իր համեմատական լռութեամբ և հեղեղի աւերման նըկատելի հետքերով՝ ճնշող ազդեցութիւն է գործում տեսնողի վրա։ Ամսիս 11-ից եղանակը դարձեալ տաքացաւ. այսօր դարձեալ բարձրացել է ջուրը, բայց մինչև անգամ եթէ դարձեալ ողողէ չուկան՝ այնու ամենայնիւ, կարծում ենք թէ մարտի 7-ի կատաղութեանը չը պէտք է կարողանայ հասնել։ Բնիկները պատմում են *որ տաճկաց տիրապետութեան միջոցին այսպիսի հեղեղներ չեն եղել, որովհետև ջուրը երկու ահագին խրամներով քաղաքի երկու կողմից թափվում է եղել գետը։ Իսկ ռուսները՝ մի խրամը բոլորովին լցրել են, իսկ միւսի վրա էլ շինութիւններ կառուցանելով՝ փոքրացրել են նրան։ Եւ ահա այդ պատճառով, համարեա իւրաքանչիւր տարի հեղեղը այցելութիւն է գործում Կարսին։ Հեղեղին զոհ գնաց մի տուն, բայց մարդկանց հետ դժբաղդութիւն չը պատահեց. տունը դատարկ էր։ Հեղեղից երկու օր յետոյ անցեալ տարի շինված մի շարք գեղեցիկ կրպակներից—որոնց սակայն պատերը ցեխով են շարված—երկուսը փլվեցան։ Բարեբաղդաբար, կրպակատէրերը չտապել էին դատարկել ապրանքը և դուրս գալ խանութներից։—Մարտի 1-ի երկրորդ ներքին փոխառութեան տոմսակների խաղարկութեան միջոցին՝ 5000 ր. ընկել է տեղիս հարուստ վաճառական Բ. եղբայրներին, իսկ 1000 ր. մի հայ ծառայողին։

Վերջին փոստը ստացած չենք. լսում ենք որ Թիֆլիս գնալու ճանապարհի խճուղին փչացել է։

Z

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Մարտի 14-ին

Ամսիս սկզբից նկատելի էր երկնքում խոշոր և սև սև ամպերի կուտակումը. փայլուն և մեծ լուսատուն հազիւ երբեմն պատառելով իր երեսի թանձր քողը ժպտում էր երկրի վրա, բայց ամպերի եռանդուն շարժումը աճելով և թանձրանալով քողարկում էին երկնակամարի հրաշալի տեսարանները։ Արտասուքի նօսր և ապա յորդահոս կաթիլները մաղվում էին շարունակ. շինութիւնների կտուրները, որոնք աննշան բացառութեամբ հոդածածկ են, ընդունելով և ծծելով իրանց մէջ մաղված հեղուկը, քամվում էին ներքև և յատակի վրա կազմվում էին լճակներ. խարխուլ և հին շինութիւններին անկասկած սպառնում էր խորտակվելու վտանգը։ Ցուն թէ կրպակ իրանց մէջ պարունակած շարժական թէ անշարժ կարասիքով, ապրանքներով յանձնված էին դաժան բնութեան բարեհաճութեան, առանց երկիւղ կրելու աւազակների կողոպուտից. բնակիչները թողել էին այդ ամենը և միմիայն իրանց կեանքը փրկելու համար ապաւինել էին և պատսպարվել ապահով շինութիւններում։ Պատուհաս էր, որ թափվում էր երկնքից. յիսունից աւելի շինութիւններ հաւասարեցան գետնի հետ, թաղելով բնակչի հարստութիւնը. եղան և կենդանի զոհեր փլատակների տակ։

Ութն օր շարունակ անձրևից յետոյ, հիւսիսային ցուրտ քամին իր հետ բերելով կարկտաբերն ձիւն, ցրվեց ամպերը. և ամսիս 10-ին առաջին անգամ տեսանք երկնակամարի գեղաձիրն պատկերը։ Այժմ միայն ամեն մարդ երևակայում է իր կորուստը, որի փոխարինները շատ և շատ նիւթական և առողջական զրկանքներ պիտի առաջացնեն ամեն մի բնակչի համար, ի նկատի ունենալով և խոնաւութիւնից առաջանալիք վտանգաւոր հետևանքները։ Դեռ ևս շատ տեղեր մինչև այսօր էլ չեն կարողացել ցամաքեցնել յատակի լճակները և անձրևը քամվում է տանիքից։ Չը կար մի հոդածածկ շինութիւն, որ փրկված լինէր կաթիլքից։

Այսօր միայն, գուցէ և մի քանի օր, մարդիկ

Իզուր էր աշխատել տեսնել ներքին կապ, բարոյական պահանջ միմեանց հետ խօսելու կամ միմեանց տեղեկութիւններ տալու, կամ անկեղծ ընկերական պարզութիւն։ Ամեն ինչ պաշտօնական էր, պարտաւորեցուցիչ և արուեստական. կարծես, մի գաղտնի զօրութիւն ասում լինէր, թէ «մի բան» պէտք է անել, թէ պէտք է աւելի պարզ յարաբերութիւններ ստեղծել, և մենք այդ զօրութեան ազդեցութեան ներքոյ ստեղծում էինք, և միայն ստեղծում։ Մենք զգում էինք, և ոչ հասկանում, մենք խօսում էինք, և ոչ գործում։ Մեր կեանքը շատ աղքատ էր և տարօրինակ. նրա նուազ բովանդակութիւնը և միակողմանի ուղղութիւնը չէին կարող տալ բաւարար պաշար այն բարձր և վսեմ գաղափարներին, որոնց մասին շատ անգամ խօսում էինք անգործութեան պատճառով։ Մեր կեանքի մասին տրրտունջ, անբաւականութիւն կը լսէիք համարեա ամեն մի ուսանողից։ Ուսանողը, որպէս մի մասնաւոր անձն կը ցաւէր, կողքաբ իր կենցաղավարութիւնը, բայց այդ անբաւականութիւնը և պեսիմիստական հայեացքները նա երբէք հրապարակ չէր հանում, որովհետև նա կամ վախենում էր աղմուկից կամ ինքն զգում էր, որ այդ տրամադրութիւնը չինծու է։ Հայ ուսանողը, ինչպէս և հայը՝ նոյնքան հեռու էր խմբական-ընկերական կեանքից, որքան և շատ էր խօսում հասարակական ինտերէսների մասին։ Մենք չունէինք ընկերութիւն, որտեղ մենք զգայինք, որ բացի եսական, անձնական շահերից՝ կան ընկերական, ընդհանուր ինտերէսներ, որ բացի փակված, առանձնական կեանքից՝ կայ աւելի վսեմ, ազատ և բարոյական կեանք. մենք ոչ մի դաղափարով անկեղծ կապված չէինք, որ ներշնչվէինք ընդհանրութեան ոգով. մենք առանձնացած էինք, մեր դեվիզն էր առհասարակ՝ «սիրիր միայնակեցութիւնը»։

Հայ ուսանողը, ի բնէ գործնական, շատ անգամ արտայայտում էր՝ չափազանցութիւն. նա չէր խմանում չափաւորութիւն. նա արձանման սաւառնում էր օդի մէջ, երբ զսպող չը կար, և սլանում էր շատ հեռու, որ յետոյ ամօթով վայր իջնէր։ Նա, պաշտպանելով հասարակականը՝ կը հասնէր այն աստիճանի, որ կը բացասէր անհատականութիւնը, իսկ երբ հանդէս էր դուրս գալիս դառն իրողութիւնը, երբ ժամանակի հոսանքը անհատականութեանն էր վերաբերվում, այն ժամանակ լռիկ-մնջիկ կը մոռանար ամեն ոչ-անհատականը։

—Մեր կեանքը ստուեր է և անդունդ. նրա դառնութեան միակ մխիթարութիւնը այն է, երբ մենք ձգտում ենք դէպի լաւը, բարին, ազնիւը և ճշմարիտը, ասում էր ոգևորութեամբ երիտասարդը։

—Այո՛, մենք պէտք է բարձր լինենք հասարակ ամբոխից. մենք պիտի կենսատու աղբիւրներ լինենք հասարակութեան համար, ուստի գիտութեան և ուսման դրօշակը բռնած, պիտի քարոզենք լաւը և ազնիւը, կրկնում էր միւսը։

Եւ դրանք սովորական խօսքեր էին, որոնք առատ աղբիւրի պէս հոսում էին միշտ, մանաւանդ ընկերական ուրախութիւնների ժամերին....

—

Մի երեկոյ նստած ընկերական շրջանում սկըսեցինք խօսել աւարտած ուսանողների գործունէութեան մասին։ Խօսակցութիւնը սկզբում շատ դանդաղ էր գնում, սակայն երբ մէկը մեզանից սկսեց համեմատել նախկին ուսանողների իդէալները և գործերը, նրանց քարոզները և կեանքը, խօսակցութիւնը կատարեալ կենդանութիւն ստացաւ։

—Խօսելը և ազնիւ բան քարոզելը, մանաւանդ երբ այդ անում է երիտասարդ ուսանողը, կարծեմ շատ բնական է։ Ուրիշ բան է, եթէ կեանքի պայմանները ոչնչացնում են նրանց, ասաց ներկայ գտնվողներից մէկը։

—Այո՛, լաւ է խօսել և ուրիշներին փրկութեան ճանապարհը ցոյց տալ, քան թէ լռել և ոչինչ չանել, շարունակեց միւսը։ Լատինական առածն ասում է. «in magnis et voluisse satest» (մեծ գործի մէջ և ցանկութիւնը գովելի է)։

—Իսկ եթէ ամենքն էլ քարոզողներ և խօսողներ են, բացականչեց երրորդը բարկութեամբ։

—Ապահովացրէք, տուէք նիւթական միջոց, փոխեցէք պայմանները, և դուք կը տեսնէք, որ քարոզողների մէջ և գործողներ կը լինեն, շարունակեց առաջինը։ Հայ ուսանողը դեռ այնչափ բարոյապէս դաստիարակված չէ, որ իր պարտականութիւնը լիովին հասկանայ. նա բաւականաչափ մտաւոր պաշար ունի և պարտաւոր է այդ ղէնքը բարձրացնել, եթէ օգնող կամ ղեկավարող լինի։ Ի՞նչ է մեր ընտանեկան կեանքը, որ այնտեղից պարտաճանաչութիւն դուրս բերվի, ինչ է մեր ծնողների և հասարակութեան պահանջը, եթէ ոչ փող և դիրք։ Այո՛, տուէք միջոց, և պարտաճանաչութիւնը երևան կը գայ, ինքնագոհ կերպով աւելացրեց միամիտ երիտասարդը։ Այսպէս բաւական երկար տևեց մեր խօսակցութիւնը։ Աւարտողներից երկուսը ազնիւ խօսք տուին հաւատարիմ մնալ իրանց գաղափարներին, որոնց թիւումն էր, ի միջի այլոց՝ հասարակ ուսուցչական պաշտօն վարելը, ժողովրդի օգտին գործելը և նրա լուսաւորութեան նպաստելը, եթէ.... եթէ միայն նիւթական աղբիւր լինի։ Պայմանը տարօրինակ էր, բայց գործելու ցանկութիւն երևում էր։ Նիւթական աղբիւրների մասին էլ խօսվեց, խօսք տրուեց, ձեռքեր սեղմվեցին, տիրեց լռութիւն, գոհութեամբ և ուրախութեամբ լի լռութիւն, և մենք ցրվեցինք։

Անցաւ շաբաթ, ամիս, երկու, բայց մենք ուրախ էինք անցկացնում ժամանակը, ոգևորվում էինք և յափշտակվում, յափշտակում էինք ուրիշներին, կատարելով քարոզչի պաշտօնը և հռչակվելով իբրև գաղափարական մարդիկ։ Մենք հանդիստ էինք, սակայն արագընթաց և վաղանցիկ ժամանակը կասկածոտ դէմքով միշտ յետ էր նայում, և մենք այդ չէինք նկատում, որովհետև կարծում էինք, թէ մենք գործ ենք կատարել։ Հասաւ երրորդ ամիսը. անագորոյն ժամանակը աւետեց մեզ, որ «մարդիկ ունեն երկու լեզու. մէկով ճշմարիտ են խօսում, միւսով այն, ինչ որ յարմար է և ծգտաւէտ»։

Պատեհական երիտասարդը անկարող էր հաւատարիմ մնալ տուած խօսքին, և մեր հարցին, ինչու այդպէս, նա պատասխանել էր՝ «հանգամանքները չեն ներում....»։

«Հանգամանքները չեն ներում», «կեանքը արգելք է դնում»,—ահա սովորական պատճառաբանութիւնները, որոնցով ամենքը իրանց արդարացնել էին ուզում....

(Կը շարունակվի)

մեծ եռանդով սայլաքարեր պտտեցնելով հողածածկ կամուրջների վրա, յոյս ունեն ապագայում իսպառ ազատվել կաթիլքից, բայց երկինքը կատակ չէ սիրում. նրա հեղուկի առջև փափկանում են մինչև անգամ և ժայռերը. ուրեմն հարկաւոր է աւելի լուրջ մտածել և ձեռնարկել հաստատուն միջոցի։ Կարողութիւն ունեցողները արդէն վճռել են թիթեղեայ ծածկոցով փոխարինել հողածածկը. մի քանիսները խորհուրդ են տալիս Բագուից բերել տալ մազուտի մի տեսակ մնացորդ և փռել աւազի հետ կամուրջի վրա. ոմանք ենթադրում են մոխրով և դաճով սրել, իսկ մեծ մասն էլ կարծում է, որ Աստուծու պատուհասից ոչ ոք չէ կարող թաղչել և աղաչում է երկնքին, այլ ևս չուղարկել աշխարհի վրա իր արհաւիրաւելից ցասումը։ Մենք խնդրում ենք մեր կողմից բագուցիների խորհուրդը այս նիւթի վերաբերութեամբ, որը ծածկելով աւազի հետ կամուրջի վրա, թէպէտ արևի ջերմութեան տակ փափկանում է, բայց ոչ հալվում, որի պուղը արժէ երկու կոպ. և մէկ պուղը ծածկում է մի քառակուսի սաժէն տարածութիւն. եթէ ճիշդ է այդ, ինչպէս հաւատացնում են, ամենամեծ բարիք արած կը լինեն մեզ մանրամասն բացատրութիւններով։

Ամիս 9-ին պատգամաւորական ժողովն ընտրեց մեր երկսեռ դպրոցների համար չորս հոգաբարձուներ. բայց, քանի որ ընտրողական ժողովներում մի քանի անկանոնութիւններ առաջացան, շատերը կարծում են, որ վերընտրութիւն լինելու է. ուստի առ այժմ լռելը խոհեմութիւն համարելով, սպասում ենք, որ վերընտրութիւնը ընդհանրական բնաւորութիւն ունենար և ոչ թէ կողմնական։

Բաղան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Զաքաթալ, 7-ին մարտի

«Մշակի» № 15-ի լուրերում թէլաւից յայտնված էր, որ այնտեղի հայոց ուսումնարանի նիւթական և ուսումնական մասը անկարգ դրութեան մէջ է գտնվում, հոգաբարձութեան անհոգութեան պատճառով։ Իսկ № 24-ում հոգաբարձութեան նախագահ Գէորգ ա. քհ. Տէր-Սարգսեան ուսումնարանի անկարգ դրութեան պատճառը համարում է Բաղդասարեան ամուսիններին։

Ես՝ որպէս նախկին ուսուցիչ նոյն ուսումնարանի, պարտք եմ համարում վերականգնեցնել ճշմարտութիւնը, աչքի առաջ ունենալով, որ այդ տեսակ ճնշումն ուսուցիչների վերաբերմամբ յաճախ է պատահում։

Յայտնի է, որ Թէլաւում կայ օրիորդական երկդասեան և տղայոց միդասեան ուսումնարան և այդ ուսումնարաններում առարկաները աւանդում են միայն հինգ ուսուցիչ, կրօնուսոյցը 12 դասով, իսկ միւսներից իւրաքանչիւրը պէտք է ունենայ 24 դաս։ Այժմ հարցնում եմ՝ արդեօք այդ ուսուցիչները կարող են բաւականութիւն տալ այն բոլոր դասերին, որոնց կանոնադրութիւնն է պահանջում. ի հարկէ ոչ, և այդպէս էր իմ այնտեղ եղած ժամանակ, երբ յաճախ դիմում էինք հոգաբարձութեան պակասող դասերի համար մի որոշ կարգադրութիւն անելու և կանոնաւոր դասացուցակ կազմելու ուսուցիչների հետ ի միասին, սակայն միշտ հոգաբարձուները և նրանց նախագահը ասում էին. «Էհ, ինչպէս և լինի եօլա տարէք էլի»։ Հետևապէս ուսուցիչները ստիպված էինք մեր խղճին համեմատ աւելորդ դասեր վերցնել, և այդ շարունակվում է մինչև այսօր։

Այս բոլորից յետոյ զարմանալի է, թէ ինչ խղճով Գէորգ ա. քհ. Տէր-Սարգսեան մեղադրում է Բաղդասարեան ամուսիններին, որոնք միշտ բարեխղճաբար են կատարել իրանց պաշտօնը։

Բաւական չէ այն բոլոր մեղադրանքը, որ արժանապատիւ հայրը բարդել է Բաղդասարեաններին վրա, վերջում նա աւելացնում է. «հոգաբարձութիւնս վճռել է արձակել նրանց, որի մէջ և կատարեալ իրաւունք ունի»։ Զարմանալի բան. եթէ ուսուցիչներին հաստատում է ս. առաջնորդը, ապա ինչ իրաւունքով հոգաբարձութիւնը ուսուցիչներ է արձակում, առանց առաջնորդի կարգադրութեան։ Երևում է որ հոգաբարձութիւնը մինչև այժմ իր պարտականութիւնը և իրաւունքները չէ ճանաչել, որովհետև եթէ ճանաչած լինէր, ուսումնարանը մինչև այժմ այն անմխիթար դրութեան մէջ չէր լինի, ինչպէս նրան նկարագրում է հոգաբարձութեան նախագահը։

Նիկողայոս Ղարագեօղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մարտի 17-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կայացաւ մեր հայ երգիչ Ն. Շահլամեանցի կոնցերտը, մասնակցութեամբ օրիորդ Ամիրեանի, պ.պ. Կնինայի, Սարաջևի և Նահապետեանի։ Պ. Տէր-Ստեփանով, որը պէտք է բանաստեղծութիւն կարդար, չը մասնակցեց կոնցերտին։ Մենք համոզվեցանք, որ պ. Շահլամեանց ճշմարիտ մի ընդարձակ, զօրեղ, բարձր տէնօր ունի, որի լէգիստրի մէջ կան և բարիտոնի հնչիւններ։ Եթէ այդ ձայնը կանոնաւոր կերպով մշակվի, նա կը դառնայ մի արտակարգ tenor di forza, բայց այժմ այդ ձայնը կարելի է համարել դեռ ևս մի հարուստ հումք նիւթ և նրան պակաս է դեռ ևս կանոնաւոր երաժշտական մշակութիւն։ Շահլամեանց պէտք է աշխատէ, որքան հնար է, յետ սովորել ասիական երգեցողութեան ձևից և, որքան հնար է, չերգել հայկական երգեր, որոնց երգելու ձևը բոլորովին ուրիշ է, քան թէ եւրոպականը։ Մեր երգիչը այս րօպէիս, եթէ այդպէս կարելի է ասել, երկու ջրի մէջ է գտնվում. հայկական, ասիական երգեր երգելու ժամանակ, նա աշխատում է նրանց երգել եւրոպական ձևով, աշխատում է նրանց եւրոպացնել, իսկ նրա եւրոպական երգեցողութեան մէջ դարձեալ նըշմարվում է ասիական երգի սովորութեան հետքերը։ Շահլամեանց ունի զօրեղ և մաքուր բարձր հնչիւններ, զօրեղ և մաքուր fortissimo, քնքոյշ, մեղմ, դէռևեկան pianissimo, բայց կապող, անցողական հնչիւններն անհաստատ են, իսկ fermato շատ անգամ այն ձևով է անում, ինչպէս դա աւանդաբար ընդունված է մեր կովկասեան տեղական երգեցողութեան մէջ։ Ինչ և իցէ Շահլամեանցի ձայնի պէս հարուստ հումք նիւթը դեռ ևս պէտք է ենթարկվի երկար շկոլային, և խիստ ու կանոնաւոր վարժութեան։ Ամենից ճիշդ կերպով նա երգեց Կոչուբէի «Скажите ей» romանսը և օրիորդ Ամիրեանի հետ իր երգած «Не искушай» duէտը։ Դահլիճը կատարելապէս լի էր, գլխաւորապէս հայ հասարակութեամբ, բայց մեզ զարմացնում է, որ ոչ արտիստական կլուբի անդամները, ոչ էլ մեր քաղաքի երաժշտական դպրոցի անդամները չեկան իրանց ներկայութեամբ խրախուսելու մի սկսողին, որի ձայնը թէև առ այժմ անմշակ, ապագայում խոստանում է, եթէ ինքն երգիչը ճշմարիտ խնամք տանի իր կոկորդում գտնված գանձի մասին, մի նշանաւոր, արտասովոր ձայն լինել։ Մենք կարծում էինք, որ տեղական երաժշտական ընկերութիւնը այդ աստիճան անտարբեր չի վերաբերվի դէպի մի տեղական սկսող տաղանդը։ Պարտաւորութիւն ենք համարում այստեղ յիշել և այն, թէ վերին աստիճանի գովելի է պ. Կնինայի կողմից որ նա միշտ սիրալիր կերպով է վերաբերվում դէպի յայտնվող տաղանդները, դէպի տեղական երաժշտական ոյժերը, և ինչքան էլ զբաղված լինի, երբէք չէ մերժում երիտասարդ արտիստների կոնցէրտներին մասնակցելու։

—

Մեզ տեղեկացնում են Կ. Պոլսից, հաստատ աղբիւրներից, որ հանրային կրթութեան թիւրքաց պաշտօնեան, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին մի պաշտօնագիր ուղարկելով յայտարարել է թէ մեծ եպարքոսի հրամանով Թիւրքիայի հայոց դպրոցներում հայոց պատմութեան աւանդելը այսուհետև պիտի հանվի աւանդելի առարկաներից, իսկ նրա տեղը պիտի բռնէ ընդհանուր օսմանեան պատմութեան դասախօսութիւնը։ Խորէն պատրիարք Աշըգեան այդ պաշտօնագրին անմիջապէս պատասխանել է թէ օսմանեան պատմութիւնը արդէն վաղուց է որ աւանդվում է բոլոր հայոց դպրոցներում, սակայն հայոց պատմութեան դասախօսութիւնը աղգային-եկեղեցական դպրոցներում արգելել անհնարին է։

—

Հաւաստի աղբիւրներից տեղեկանում ենք, որ թիւրքաց կառավարութիւնը նորից թոյլ է տուած «Երկրագունտ», «Խիկար» և «Բուլաստան» հայոց հրատարակութիւնները, որոնք մի քանի ամիս առաջ արգելված էին նոյն կառավարութեան հրամանով։

—

Վրաց «Իվերիա» լրագիրը մեծ գովասանքով է խօսում մեր երգիչ պ. Շահլամեանցի ձայնի մասին և գուշակում է նրան փայլուն ապագայ։

—

Մեծ պատի ժամանակ շրջակայ տեղերից դէպի ԹԻՖԼԻՍ անասունների սակաւ բերելու պատճառով ոչխարի մսի գինը քաղաքում զգալի կերպով բարձրացաւ։ Ոչխարի մսի ֆունտը արժէ այս րօպէիս 15 կոպէկ։

—

Զատիկ օրվայ տօնների մատենալու պատճառով առևտուրը ԹԻՖԼԻՍՈՒՄ մի արտասովոր կենդանութիւն է ստացել։

—

Պրոֆէսսոր Անդրէաս Գաբրիէլիի «Բնաւորութեան կրթութիւնը» վերնագիրը կրող աշխատութիւնը այս օրերս լոյս տեսաւ հայերէն լեզուով, թարգմանութեամբ պ. Գրիգոր Շահբուդաղեանի։ Գրքի բովանդակութիւնը վերաբերումէ մի այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին է մարդկային բնաւորութեան կրթութեան հարցը, և այդ տեսակէտից գիրքը ընթերցանութեան արժանի է. բայց չենք կարող չը նկատել, որ այդ աշխատութիւնը այնքան էլ խիստ գիտական հիմունքների վրա չէ հիմնած, այլ աւելի ներկայացնում է իրան՝ պրոֆէսսոր Անդրէաս Գաբրիէլիի բաղձանքները և անձնական հայեցակէտերը։ «Բնաւորութեան կրթութեան» գիրքը շօշափում է ոչ թէ միայն անհատական, այլ և ընտանեկան և դպրոցական դաստիարակութեան խնդիրները։ Շատ ցանկալի է որ առհասարակ այդ տեսակ բովանդակութիւն ունեցող գրքեր մուտք գործեն մեր հասարակութեան մէջ, ցանկալի է միայն որ աւելի խիստ ընտրութեան հետ միասին, թարգմանողները աշխատեն որքան կարելի է մատչելի և պարզ լեզուով թարգմանել այդպիսի գրուածները։ Պ. Շահբուդաղեանի այդ գրքի թարգմանութեան լեզուն շատ աջողված կարելի էր համարել, եթէ թարգմանիչը աշխատէր միանգամայն հեռու մընալ այն գրաբար վերջաւորութիւններից և դարձուածներից, որոնք պատահում են այդ գրքի մէջ։ Թարգմանիչը առանձին խնամք է գործ դրել գրքի արտաքին գեղեցկութեան և սրբագրութեան վրա, և այդ բանը արժանի է յիշատակութեան հէնց այն պատճառով, որ ամեն օր մեզ ուղարկված գրքերի մեծ մասը ոչ թէ միայն անճոռնի ենլինում արտաքին կողմից, այլ և անտանելի սրբագրութեան կողմից։

—

Մարտի 19-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կայացաւ Թիֆլիսի Փոխադարձ Կրեդիտի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Գաղտնի քուէարկութեամբ ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց պ. Պ. Իզմայլով։ Ժողովը լսեց բանկի վարչութեան կազմած 1888 թվի հաշիւը և 1889 թվի նախահաշիւը, վերաստուգողական յանձնաժողովի զեկուցումը և վերջապէս խորհրդի տեղեկագիրը իր գործունէութեան մասին։ Կարճառև վիճաբանութիւններից յետոյ ժողովը հաստատեց թէ 1888 թվի հաշիւը և թէ առաջիկայ տարվայ նախահաշիւը։ Դրանից յետոյ գաղտնի քուէարկութեամբ տեղի ունեցան մի դիրեկտորի, խորհրդի և վերաստուգողական յանձնաժողովի երեք անդամների ընտրութիւնները՝ հերթով դուրս եկողների փոխարէն։ Դիրեկտորի պաշտօնի համար երեք կանդիտատներ առաջարկվեցան. այն է նախկին դիրեկտոր պ. Ա. Յովհաննիսեան, պ. Ղազարեան և պ. Մանդէնով։ Ձայների առաւելութեամբ նորից ընտրվեց պ. Ա. Յովհաննիսեան։ Խորհրդի անդամներ ընտրվեցան պ. Պ Իզմայլով, Ա. Տէր-Յակոբեան, և Զ. Թամամշեան, իսկ վերաստուգողական յանձնաժողովի անդամներ՝ պ.պ. Դոլուխանով, Տէր-Ալէքսանդրեան և Կանդուրալով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԳԻՒՏ

—

Լոնդոնից հաղորդում են երկու նոր գիւտի մասին, որ արել են երկու հայեր՝ բժիշկ Քալանթարեան և պ. Մուրադեան։ Առաջ ենք բերում Կ. Պոլսի «Արևելք» լրագրից այդ գիւտերի վերաբերեալ հետևեալ մանրամասութիւնները։ «Անշուշտ մեր ազգայիններէն սակաւուց ծանօթ է որ տ. Յովհաննէս Քալանթարեանց, ծննդեամբ Ագուլեցի, յետ դիւր բժշկական ուսումը կատարելու յէտինպըրկ, հաստատուած է 18 տարիէ ի վեր Անգլիոյ ծովեզերեայ Աբարպօրօ քաղաքը իբրև բժիշկ։ Այս անձն—դիւր պարապոյ ժամերն զբաղեցուցած է կերպ կերպ գիւտեր հնարելու, և յաջողած մէկ քանիներու մէջ։ Իւր հնարած գիւտերէն առաջինն եղած է նոր տեսակ սնդիկաւոր օդաչափ մը յօրինել դիւրատար, այսինքն փոքրիկ ձևոյ վերածած, որ շատ պիտանի կը լինի աշխարհագէտ ուղևորաց և նաւորդաց։ Այս օդաչափին ձևն և նկարագիր հրատարակուած է ի Լոնտոն ի թերթն The philosophical Magazine and Journal of science, Մայիս, 1870։—Դարձեալ ուրիշ գիւտ մը ունի որ Անգղիոյ տուներուն համար շատ պիտանի է։ Ցանց վերի դստիկոններն ելլող ջրոյ կապարեայ ծամ երկաթեայ խողովակներն ընդհանրապէս տուներուն դրսի կողմը կը հաստատուին, ուստի ձմեռ ատեն շատ անգամ սառոյցի ժամանակ այդ խողովակները կը պայթին իրենց մէջ գտնուած ջրոյն սառելովն։ Այս անհաճոյ պատահարին առաջն առնլու համար, պ. Քալանթարեանց առաջարկած է այդ խողովակաց մէջ վերէն ի վար, այն մասերուն մէջ որ սառելու ենթակայ են, քառուչուէ նուրբ խողովակ մը մուծանել, որպէս զի ջրոյն սառելէն առաջ եկած ընդլայնման տեղ տայ քառուչուն, և արտաքին խողովակը ձերծ մնան ճնշմանէ։—Տ. Քալանթարեանց երրորդ գիւտ մի ևս հրատարակեց այս օրերս իւր բնակած քաղքին մէջ, որ անշուշտ ծաւալումն պիտի գտնէ առ այժմ ոչ միայն Անգղիոյ և հիւսիսային ցուրտ աշխարհաց, այլ նաև նոյն իսկ հարաւային և ջերմ աշխարհաց մէջ։ Ծանօթ է Հայաստանի լեռնային և բարձր աշխարհաց թէ ինչ է սահնակն կամ ըստ հին գաւառացւոց չմուշկ (patin) կոչուածը։ Այդ զբօսանքն մեծ զուարճութիւն է երիտասարդական հասակին հիւսիսային աշխարհաց մէջ, որ երբ գետ մը կամ որ և է չափաւոր մեծութեամբ ջուր սառի և պնդանայ, կը սահեցունեն զիրենք իրենց կօշկին տակ դէպի երկայնքը գուլ սրաձև երկաթ մը կապելով։ Բայց կարելի չէ այդու զբօսանք զուարճանալ միշտ, այլ միայն ձմերային եղանակում, և այն սառոյցի օրեր։ Անշուշտ ցանկալի էր գիւտ մը հնարել որ կարելի ըլլայ այդ զբօսանքը նաև այդ պայմաններէն դուրս ալ վայելել։ Պրոֆ. Կէմֆի խորհեցաւ արուեստական սառնարան չինել ի Սաուտհբորդ, ընդարձակ սրահի մը յատակը ջուրը սառեցունելով, բայց անհնարին է ասոր ալ ծախքն. զի սոսկ այդպիսի սառնարանի մը չինութեան համար 30,000 ռսկի կերթար, և պահպանման համար ալ տարեկան 2,500 ռսկի։

Կը մնար ուրեմն Պ. Քալանթարեանցի այս խնդրոյն վերջին լուծումն տալու պատիւն, որ Աբարպօրօ՝ Լոնդոնի զբօսաշրջաց խմբավայր եղող՝ քաղքին մէջ առաջին անգամ կը բացուէր հանդիսաւոր կերպիւ վերջին յունուար ամսոյն 31-ին, հինգշաբթի օր մը. և յաջորդ օրը նոյն քաղքին թերթերը անմիջապէս կը հրատարակէին, յորոց «Աբարպօրօ Կազէդ» կոչուածը այսպէս կը պատմէր, նշանաւոր գիւտ մը խորագրելով. «Աբարպօրօ պարտաւոր մնաց իւր բժիշկներէն միոյն—Տ. Քալանթարեանցի—որ նոր և. յոյժ հաճոյական յաւելուած մը ըրաւ իւր զբօսարանաց։ Երկար համբերատար և հանճարեղ փորձերէ ետև յաջողեցաւ վերջապէս գտնել ալքալիներէ և աղերէ խառնուած այնպիսի բաղադրութիւն մը, որ զրեթէ կատարեալ կերպիւ կրնայ, ինչպէս փորձուեցաւ, սառի նման իւր վրայ սահելու շընորհալի արուեստը և զուարճութիւնը կատարել տալ։ Այսու բաղադրութեամբ, զոր հնարողը Բիւրեղասառն (Cristal Ice) անուանած է, Լոնտոպօրօ Ռումս ըսուած զբօսատան ընդարձակ գետնայարկի սրահին յատակը պատրաստուեցաւ, բացուեցաւ հասարակաց Քաղաքապետին նախագահելով։ Քաղաքապետը յետ մի առ մի թուելու այս նոր սառնարանին բարեմասնութիւնները, ըսաւ թէ ինքը տարակոյս չունէր որ քաղաքին երիտասարդութիւնը կարի շնորհապարտ լինելու է Տ. Քալանթարեանցի։

Ահա մի երկրորդ գիւտ ևս։

Այս երկրորդ գիւտոյն պարծանքը կը վերաբերի առ Պ. Միհրան Մուրատեան, վաճառական ի Մանչէստր։—Կտաւեղինաց վաճառականք յաճախ պէտք կունենան իրենց յանձնուած կտաւեղինաց թելերուն թանձրութիւնը քննել, զի կարող են մանող գործարանք դողութիւն ընել անզգալի նրբացունելով յանձնուած կտաւները. առ այս տիպուած են գնող վաճառականք կտաւոյն հիւսուած թելերը քակել մինչև 120 յարտա և կշռել. բայց այս քակելը մեծ դժուարութիւն ունի և շատ ժամանակ վատնել կուտայ։ Պ. Մուրատեան գործիք մը հնարեց զայս գործողութիւնն մեքենայով մը ընելու։ Մեքենայն՝ երկաթեայ քառակուսի սեղանոյ ձև ունի չորս ամուր ոտքերու վրայ հաստատուած։ Քակելի կտաւը իւր բոլոր երկայնքովը սեղանոյն մէկ կողմը լարուած

կը պրկուի և երկու փայտեայ գլաններու մէջ կը հաստատուի, և թեղանէն (weft) հանուելու թելին ծայրը յետ հաղորդելու իւր դիմացովը զետեղուած անուոյ մը, որ վիլակի պաշտօն կը կատարէ, գործաւորին ուրիշ բան չը մնար ընել, բայց սեղմանոյն. աջ կողմը գտնուած անիւը դարձունել. անմիջապէս անիւը կը սկսի դառնալ և թելը քաշել պրկուած կտաւէն և իւր վրայ պլլել. և քանի քակուի, երկու գլաններու մէջ առնուած կտաւը կը սկսի սակաւ առ սակաւ յառաջ քալել։ Թեղան թելին հետզհետէ քակուելովը՝ երբ կտաւոյն առէչին (warp) ծայրերը. այնքան երկնան որ արգելք ընեն թեղանին հանգիստ քակուելուն, գործաւորը մեքենային այս ինչ մասին դպչելով, երկուստեք գտնուած դանակները, որ վերամբարձ բաց կեցած են լարուած կտաւոյն առջև, անմիջապէս ուժով վար կիջնան և առէչքին աւելորդ ծայրերը կը կտրեն։ Եթէ թեղան թելը պատճառաւ արգիլուի քակուելէն և փրթի, գործաւոր ձեռքը դարձող անիւը անմիջապէս ինքնին կարգիլուի և չը դառնար, որով և հարկ եղած դարմանը կը կատարէ։ Թեղան թելը քանի քակուի, մեքենային մէկ կողմը աստիճանացոյց մը կը ցուցնէ հետզհետէ քակուած թելին երկայնութեան չափը. բայց հարկ չը կայ որ գործաւորը ամեն անգամ այս աստիճանաչափին նայի. զի երբ թեղանը 120 յարտա երկայնութեան լրանայ, զանգակիկ մը ձայն կը հանէ և կաղդարարէ որ ուզուած երկայնութեան չափը լեցուած է։— Լոնդոնի «Invention» շաբաթաթերթ, այս մեքենային մանրամասն նկարագիրը և իւր խորհրդածութիւնները ընելէն վերջը, կաւարտէ իւր խօսքը ըսելով. «Պիտի տեսնուի թէ այս մեքենայն բաղդատաբար պարզ, բայց շատ դիւրագործածելի է, և անկուածոյից ճարտարութեան օգտակար ծառայութիւն պիտի մատուցանէ»։ Այս մեքենայն, որ պատիւ կը բերէ իւր հնարողին երիտասարդ մտացը և գործունէութեան, սակաւ ժամանակէն ի վաճառ պիտի հանուի յԱնգղիա և այլուր»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայից հեռագրում են, որ վերջին օրերումս նկատուում է, որ թիւրքաց կառավարութիւնը զօրք է կենտրօնացնում Ադրիանօպոլի մօտ։

—Սօֆիայից գրում են, որ Կօբուրգեան պրինցը մտադրութիւն ունի այս գարնան Վիէննա գնալու։ Այդ բանին քաղաքական նշանակութիւն են տալիս։

—Էլդաս Լօթարինգիայից մի ուրախալի լուր են հաղորդում, այն է, որ գերմանական կառավարութիւնը վճռել է շուտով վերացնել ֆրանսիական սահմանի վրա անցագրերի վերաբերեալ խիստ օրէնքները։ Թէ որքան ճիշդ է այդ լուրը, ասել չէ կարելի, բայց, ի հարկէ, նրա ճիշդ լինելը շատ ցանկալի է, քանի որ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ՝ անցագրերի խնդիրը՝ քաղաքական պատճառներով՝ արտասովոր խստութիւններով և ձևականութիւններով է եղել խճճված վերջին ժամանակներս։

—Անվերջանալի յուզմունքներ են տեղի ունենում Կրիտէ կղզու վրա։ Լուր կայ, որ թիւրքաց կառավարութիւնը վճռել է շատ խիստ միջոցներ ձեռք առնել այդ յուզմունքներին առաջն առնելու համար։

—Ինչպէս երևում է վերջին հեռագիրներից, Զէրնօգօրիան կամենում է բարեկամական սերտ յարաբերութիւններ հաստատել Սերբիայի այժմեան կառավարութեան հետ։

—Հռոմի պապը հիւանդ է և այդ հիւանդութիւնը քանի գնում է, այնքան ծանրանում է։ Արդէն պապի չրջապատողները խօսում են նոր պապի ընտրութեան մասին, ենթադրելով որ այժմեան պապի հիւանդութեան հետևանքը մահ կը լինի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի։ «Journal de St.-Pétersbourg» կտրական կերպով հերքում է Վիէննայի «Pol. Correspondenz» լրագրի հաղորդած լուրը,—որի նպատակն է վայր դցել բուլգարական երկու նաւեր միմեանց դիպան. նրանցից մէկը խորասուզվեց. միայն «Պրինց Գերօյ Նապոլէօն», նաւը ազատվեց։

ԼՕՆԴՕՆ, 18 մարտի։ Փոթորկի ժամանակ Սամաօ կղզու մօտ, խորտակվեցան երեք գերմանական և երեք ամերիկական զինուորական նաւեր։

ԲԷԼԳՐԱԴ, 18 մարտի։ Միլան ուղևորվեց Կ. Պոլիս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի։ «Правит. Вѣстникъ» լրագիրը տպել է մի նկատողութիւն կոմս Պեսար Անդրէեվիչ Շուվալովի մասին, իբրև պատասխան մամուլի կողմից հանգուցեալի մասին արած անարդար գնահատութեան, մանաւանդ նրա դիպլոմատիական գործունէութեան վերաբերմամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի։ Մեր նոր 4%-ական փոխառութեան համար եղած ստորագրութեան ընդհանուր գումարը, առձեռն դրամով՝ հասնում է 6 միլիարդ ֆրանկի, այսինքն 3 անգամ աւելի է, քան առաջին 4%-ական փոխառութեան ստորագրութիւնը։—«Гражданинъ» լրագիրը լսել է որ երկաթուղիների ժամանակաւոր վարչութիւնը միացրած կը լինի երկաթուղիների դէպարտամենտի հետ, որի պատճառով կատարվելու են փոփոխութիւններ պաշտօնեաների մէջ։—Ասում են, որ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը կունենայ երկու օգնականներ, որոնցից մէկը տեխնիկական մասը կը ղեկավարի, իսկ միւսը տնտեսական մասը։ Կարծում են որ այդ պաշտօնների վրա նշանակվելու են՝ ինժիներ գեներալ Պետրով և դաղտնի խորհրդական Նէրօնով։

ՓԱՐԻԶ, 20 մարտի։ Այսօր տեղի ունեցաւ Էյֆէլեան աշտարակի բացումը։—Լրագիրները հաւատացնում են, որ մինիստրները վճռեցին երէկ պահանջել պատգամաւորների ժողովից՝ սենատի դատի ենթարկել Բուլանժէին, բայց վերջին րոպէին Բուշէ պրօկուրօրը, բաւարար ապացոյցներ չունենալու պատճառով, հրաժարվեց ստորագրել մեղադրական թուղթը և հրաժարականի մասին խնդիրը ուղարկեց։ Լուր է տարածված, որ Բուշէ յետ վերցրեց իր հրաժարականի խնդիրը և վճռեց սպասել այն ժամին, երբ պատգամաւորների ժողովը անկասկած կը հաստատի սենատը բարձրագոյն դատարանի վերափոխելու օրինագիծը։—Հայրենասէրների միութեան գործին վերաբերեալ դատաստանական քննութիւնը կը սկսվի երեքշաբթի։ Վիճաբանութիւնների ժամանակ պրօկուրօրը կառաջարկի յետաձգել քննութիւնը մինչև պետութեան ապահովութեան դէմ դաւադրութեան գործի սկսվելը, երբ դատի կենթարկվեն Բուլանժէ և հայրենասէրների միութեան մասնաժողովի անդամները։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ մամուլի տակից և վաճառվում է կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում

„ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ“

Բարի՛ արհեստագիտական արքունի ձեմարանի իտալական գրականութեան պրոֆէսսոր Անդրէաս Գաբրիէլիի յոյսերն ու բաղձանքները։ Թարգմանեց Գրիգոր Շահրուդաղեանց.

Գինն է 60 կօպ. 1—3

ՆՈՐ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

(Պիանինօ)

Ամերիկական տեսակի, վարձով են տրվում և ծախվում են գործարանական գնով, Կոպպի դաշնամուրի գործարանում, Միքայէլեան փողոց, № 132. 3—5

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԳԻՐՔ

Աշխատասիրեց Հ. Աւետիք վ. Կոյլաւեան, Վիէննա, 1889, Մխիթարեան տպարան

Նոյն գերմաներէն-հայերէն (աշխարհաբար) բառագիրքն (104 թերթ=1667 երես) ունի սկիզբն համառօտ գերմաներէն քերականութիւն. կը բովանդակէ գերմաներէն լեզուի ամեն գործածական գիտական և ընտանեկան բառերն ու բացատրութիւններն, բառերու ասութիւններն ու առումներն, և այլն։ Տպված է ազնիւ թղթի վրա, թղթակազմ կամ կիսալաթի արժէքն է 10 ռուբլի, կիսակաշի 11 ռուբլի, ճանապարհի ծախքը 80 կօպէկ գնողին վրա է։ Շատ օրինակ գնողին քանակութեան համեմատ զիջում կը լինի։ Ցանկացողները կարող են ստանալ՝ գինն ու ճանապարհի ծախսը ուղարկելով հետևեալ հասցէին. Въ Вѣну. (Австрія) Mechitharisten-Congregation Wien Mechitharistengasse 4. 4—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (և ատամնացաւի), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի։
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11¼—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—6½—7½ ժամ.

Հիւանդանոցումն է մանկաբարձուհիք Մօղեր և Երևանցեան։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՉԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Ֆրանսիայի դեղին և սպիտակ շերամի ամենալաւ ցեղից պատրաստած ունեմ Պաստեօրի մեթոդով։ Գունը 60 ռուբլի, 5 մսխալը՝ 3 ռուբլի 50 կօպ., ճանապարհածախսով։

Հասցէն՝ Туапсе, Черноморскій округъ, Варваринская Сельско-Хозяйственная школа, Леону Степанянцу. 13—15

Дозволено цензурою, Тифлисъ 20 Марта 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.